

Թիւ 2056
Ապրիլ 24, 1961

Արժանաշնորհ
Տ. Արթանէս Աւագ Բհնյ. Փափագեան
Այցեւում Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ս. Միլվորի.

Սիրելի Տէր Հայր.

Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգով այսու կը յայտնենք թէ իր ժամանակին ստացուած է Եկեղեցւոյդ պատուարժան Միական Խորհուրդի Ապրիլ մէկ թուակիր նամակը, ի մասին ձեր կատարած օգտաշատ աշխատանքներուն եւ 10.000 տոլարի փոխառութեան:

Այդ դիմումնագիրը, որուն ներքեւ ստորագրած են ատենապետ՝ Իսահակ Հայտարեան, ատենադպիր՝ Յ. Ժ. Նապետեան, գանձապահ՝ Պարսամ Պարսամեան, փոխ-ատենապետ՝ Ռուսէլ Բայշեան եւ պատգամաւոր՝ Կարապետ Պաղտասարեան, բաւական չըլլալով, ներփակ կը դրկենք փոխառութեան համար մասնաւոր հարցարան մը:

Այս հարցարանին առաջին տողին վրայ պէտք դրուի փոխ ուզուած գումարը, եւ զայն վճարելու թուականը: Ներքեւը պէտք է ստորագրեն ատենապետն ու ատենադպիրը: Իսկ միւս կողմը վերոյիշեալ միւս անձերը: Իւրաքանչիւր անձ /10.000 տոլարի փոխառութեան համար/ երաշխաւորած պիտի ըլլայ 2.000 տոլար: Ուրեմն, երկրորդ էջին վրայ այս հինգ անձերը կարգով կը ստորագրեն եւ իրենց ստորագրութեան դիմաց կը նշանակեն երկու հազար տոլարի գումարը:

Այս հարցարանը երբ վերադարձնէք Կաթողիկոսարան, իսկոյն կը ներկայացնենք Առաջնորդարանի Մասնաւոր Հիմնադրամին /Տատուր Տատուրեան Ընկերութեան/ եւ վստահ ենք որ շուտով ընթացք կը տրուի փոխառութեան գործին, որպէս զի կարենաք հոգալ ձեր Եկեղեցւոյն նկատման կարիքները:

Այս առթիւ Ձեզի կը մաղթեմ առողջութիւն:

Մնամ խորին յարգանք
Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ

Մեծ Կաթն Խորհուրդ
 Ս. ՅԱՐՈՒՆԻՆ
 ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՑ
 909 Միչիգան Եվերե
 Սառեթ Միլվուքի, Վիսքոնսին



PARISH COUNCIL
 Of
 St. Haroutune Armenian Church
 909 Michigan Avenue
 South Milwaukee, Wisconsin
 Phone: SO 2-9882

April 1, 1961

Archbishop Sion Manegian, Primate
 Diocese of the Armenian Church of North America
 630 Second Avenue
 New York City

Your Grace:

We are grateful to say Rev. Papazian took time during his busy schedule to give the children and adults of St. Haroutune Church communion. The communion service was held at St. Mark's Episcopal Church.

At this time Rev. Papazian presented our chairman with a letter, dated March 13 from the Diocese, regarding a loan for our new church.

We understand from the letter that there is now a \$10,000 loan available for St. Haroutune Church and that there is also a questionnaire to be answered. The loan is most certainly appreciated. Our original estimate of pledges to be received was slightly high because already we have lost some of our members but hope to get them back some day.

The new building is starting to take shape now that the weather has been better. Within a few weeks the trusses should be put up as the basement walls will be finished within a few days.

In closing, we would be obliged if your office would forward the questionnaire and all details concerning the loan.

Esahag Haldarian
 Esahag Haldarian, Chairman

PARISH COUNCIL
H. J. Nabedian
 H. J. Nabedian, Secretary

Barsam Barsamian
 Barsam Barsamian, Treasurer

Garabed Bagdasarian
 Garabed Bagdasarian, Delegate

Russell Kaishian
 Russell Kaishian, Vice-Chairman

